ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ» 1912 թ.

Ս. Գ. Հովհաննիսյան

Մի առիթով Թումանյանը այսպես է ձևակերպել իր համար սկզբունքային նշանակություն ունեցող «կյանքի անսասան օրենքը». «Եղիր անկեղծ, չիտակ ու բարի, այնուհետև թեկուզ ամբողջ աշխարհքը վեր կենա քո դեմ...վերջը դու ես հաղթելու»[1]:

Այսպես դրել է բանաստեղծը 1914 թ., երբ արդեն նստել էր մեղադրյալի աթոռին և արդարացվել: Նրա դեմ դուրս էր եկել «ամբողջ աշխարհքը» ցարական-բյուրոկրատական ողջ ապարատը՝ բազմաթիվ լրտեսներով ու կեղծարար քննիչներով, բանտերով ու դատարաններով. «բայց վերջը նա էր հաղթել», որովհետև գործը, որի համար մեղադրվել էր բանաստեղծը, արդար էր, չիտակ ու բարի:

Թումանյանագիտությունը դեռ մեծ անելիքներ ունի բանաստեղծի անձնական կյանքն ու ազգային գործունեությունը ուսումնասիրելու ասպարեզում: Իսկ անձնական կյանք բառի սովորական իմաստով Թումանյանը չի ունեցել: Նրա կյանքը նույնանում է հայ ժողովրդի ազգային-քաղաքական կյանքին և հանդիսանում է մեր պատմության ու մշակույթի ամենահետաքրքրական, բարդ ու ողբերգական, բայց և երջանիկ էջերից մեկը:

Հայտնի է, որ 1905-1906 թթ. Թումանյան քաղաքացին ապրեց մարդկային արյունահեղությունը դադարեցնելու բերկրանքն ու երջանկությունը, և հետագայում հպարտ էր, որ սրերը պատյաններն է դնել տվել, ինչը համարում էր ավելի մեծ բան, քան իր գեղարվեստական ժառանգությունը: Բայց հենց այդ ազնիվ գործի համար նա նստեց հանցագործի, մեղադրյալի աթոռին:

Հովհ. Թումանյանի անձն ու գործունեությունը մշտապես եղել են Թիֆլիսի պահնորդական բաժնի հսկողության տակ, որի փաստաթղթերում 1900 ական թթ. սկսում է հիշատակվել Թումանյանի անունը[2]:

---

1 Հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով. հ. 7, Երևան, 1995, էջ 433:

2 Այս մասին հանգամանորեն շարադրված է Լ ու ս ի կ Կ ա ր ա պ ե տ յ ա ն ի «Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը» գրքում, Երևան, 1992, էջ 7-30:

Սակայն Թումանյանի հալածանքները սկսեցին հայ-թուրքական ազգամիջյան 1905-1906 թթ. ընդհարումներից և ռուսական առաջին հեղափոխության պարտությունից անմիջապես հետո:

Հայ-թաթարական արյունոտ կռիվները ծայր առան Բաքվում 1905 թ. փետրվարի 6-ին, այնուհետև ընդգրկեցին ողջ Անդրկովկասը: Այս շրջանում հայ ազգային կուսակցությունները, հատկապես դաշնակցությունն ու հնչակյանները, հանգես եկան որպես հայության պաշտպան ուժեր, կազմակերպեցին ինքնապաշտպանությունը և ջարդարարներին հակահարված հասցնելու գործը: 1906 թ. աղերի թաթարները հաշտություն առաջարկեցին և կռիվները դադարեցին: Իսկ դաշնակցությունը անմասն չմնաց նաև Ռուսաստանում ծավալված հեղափոխությունից, կազմակերպում էր հակացարական ցույցեր, քաղաքական գործադուլներ, բողոքի հանրահավաքներ: 1905-1906 թթ. դաշնակցությունը բացառիկ ուժեղ կուսակցություն էր ամբողջ Անդրկովկասում, բայց 1907 թ. գարնանից, կապված հեղափոխության պարտության հետ, կուսակցության ուժերը նվազեցին, և նրա դեմ սանձազերծված հալածանքներն ուժեղացան: Ցարական կառավարությունը որոշել էր մեծ դատ կազմակերպել դաշնակցության դեմ՝ նրան վարկաբեկելու նպատակով:

Եվ ահա 1907-1908 թթ. Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում, Ռոստով-Նախիջևանում, Գանձակում, Երևանում սկսեցին կալանավորել բոլոր նրանց, ովքեր այս կամ այն չափով առնչված էին դաշնակցության գործունեությանը: Այդ տեռորը տարածվեց ողջ հայ մտավորականության վրա. ինչպես դրում է Լեոն՝ «Ցարական գարշելի բյուրոկրատիան ինքն էր սարքել հայ-թաթարական կոտորածները և այժմ հալածում էր հայերին՝ նրանց կազմակերպած ինքնապաշտպանության համար»[3], «Թվում էր, թե այդ մի ընդհանուր հալածանք էր հայ ինտելիգենցիայի դեմ, որովհետև դաշնակցականների հետ ձերբակալվում էին և շատ ո՛չ դաշնակցական հակառակորդներ...

Թուրքերի դեմ ոչ մի հալածանք չսկսվեց, հալածում էին միայն հայերին, թե ինչո՞ւ նրանք զենք են վերցրել և իրենք իրենց պաշտպանել»[4]:

Անշուշտ, Լոռիում հայ ինքնապաշտպանության գործի հիմնական կազմակերպիչներից մեկը՝ Թումանյանը, չէր կարող հայ առաջավոր մտավորականության դեմ նյութված այդ մեծ հաշվեհարդարից զերծ մնալ:

Թումանյանը բանտարկվել է երկու անգամ: Առաջինը՝ 1908 թ. դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը, իր ավագ որդու, այն ժամանակ Թիֆլիսի արական երրորդ գիմնազիայի 8-րդ դասարանի աշակերտ Մուշեղի հետ: Այդ օրը Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետի հրամանով Թիֆլիսի 5-րդ տարածաշրջանի դատական կատարածուի՝ Դավիթ Ալեք-

3 Թումանյանը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1969, էջ 64–65:

4 Լ. ե ո. Անցյալից. Թիֆլիս, 1925, էջ 225–226:

սանդրի Դաշկովի ղեկավարությամբ ոստիկանները խուզարկեցին բանաստեղծի Բեհբության փողոցի N 44 բնակարանը ու թեև նրա հեղափոխական կամ դաշնակցական լինելու մասին որևէ ապացույց, զենք, կամ կուսակցական դաղտնի դրադրություն, նամակագրություն չդտան, սակայն առդրավեցին և ժանդարմական վարչություն տարան գրողի արժեքավոր ձեռադրերը՝ մոտ երկու պարկ, որի զդալի մասը (հատկապես «Հին կոիվը» պոեմի հատվածները) այդպես էլ չվերադարձվեցին բանաստեղծին[5]:

Այնուհետև հինդ ու կես ամիս Մետեխի բանտի N 15 բանտախցում մնալուց հետո 1909 թ. հունիսի 13-ին Թումանյանը Փիլիպոս Վարդազարյանի վճարած 5000 ռուբ. փրկագնով ազատ արձակվեց: Ի դեպ, Վարդազարյանը զարմացել էր, որ փրկագինը 20–25000 չէր, ինչպես շատերինը և զայրացել, թե ինչու են Թումանյանին այդքան «էժան գնահատել»: Պատճառներից մեկը հավանաբար բանաստեղծի ընտանիքի բազմանդամությունն էր և այն, որ իշխանությունները վստահ էին, որ Թումանյանը չի թողնի 10 երեխան ու փախչի արտասահման:

Թումանյանի անունով հատուկ մեղադրական գործ չի պահպանվել ո՛չ Վրաստանի պետական կենտրոնական արխիվում և ո՛չ էլ Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտի հատուկ բաժնի ֆոնդում: Նյութերը ամփոփված են «Դաշնակցության գործ» ընդհանուր խորագիր ունեցող մեղադրական գործի տարբեր տարիների թղթապանակներում: 1905 թ. մարտին «Դաշնակցության գործի» քննությունը հանձնվել էր Նովոչերկասկի մարզային դատարանի առավել կարևոր գործերով քննիչ Ն. Լիժինին, որը հայտնի էր իր դաժանությամբ: Լիժինը ձերբակալվածների մեծ մասին, այդ թվում նաև Թումանյանին մեղադրում էր քրեական օրենսդրքի 102-րդ հոդվածով «հակակառավարական արարքների համար», որը ապացուցելու դեպքում նրանց բոլորին սպառնում էր Սիբիր, տաժանակրություն: Այս գործով ձերբակալվածների հարցաքննությունները տևել էին չորս ու կես տարի՝ 1907 թ. հունիսի 10-ից մինչև 1911 թ. վերջերը: Թումանյանին հարցաքննել են 1909 թ. մայիսի 26-ին: Ըստ այդ արձանագրության՝ 1906 թ. Թումանյանը Ղազախի գավառի Բաբանա գյուղում դազախեցիների ու լոռեցիների հետ միասին առաջարկել է կրքեր հրահրող Շիխալիին իր համախոհների հետ անհապաղ հեռանալ տարածաշրջանից, և ինքը կարողացել է կանխել հայ-թաթարական կոտորածը: Մինչև դատավարությունը կազմվել էր 1000-ից ավելի գործ: Դաշնակցությունը, ըստ այդ դատական գործի, երկու մարմին ուներ՝ դաղափարական-պրոպագանդիստական և ահաբեկ-

---

5 Այդ խուզարկության մասին պահպանվել է Դ. Ա. Դաշկովի 1909 թ. մայիսի 19-ի հարցաքննության արձանագրությունը: Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ (Պատմության կենտրոնական պետական արխիվ), Следственные материалы по делу партии "Дашнакцутюн", հարցաքննությունների ժողովածու 7 հատորով, Նովոչերկասկ, 1912 թ., հ. 5, էջ 3842: Այս մեծադիր հատորների ուսումնասիրությունն էլ հենց հիմք է հանդիսացել Թումանյանի դատավարության մանրամասների հայտնաբերման համար:

չական՝ տեռորիստական: Թումանյանի անունը վերջին մարմնի անդամ հանդիսացողների ցանկում էր: Քննչական մեկ այլ արձանագրության մեջ Թումանյանի անվան դիմաց գրված էր՝ «Դաշնակցության հայտնի անդամ, որը մասնակցել է բոլոր կոմիտեներում»[6]: Թումանյանը այս անգամ նույնպես իշխանությունների ուշադրության կենտրոնում էր, մանավանդ որ 1911 թ. ամռանից նա դաշնակցությանը պատկանող «Հորիզոն» լրագրի իրական խմբագիրն էր, թեև չէր ստորագրում այն: 1911 թ. ապրիլի 28-ին Երևանի նահանգական ժանդարմական վարչությանն ուղղված Թիֆլիսի նույն վարչության պետի «Հույժ գաղտնի» գրության մեջ հիշատակվում է նաև Թումանյանի անունը: «Շրջանի գործակալային տեղեկությունների համաձայն,– հաղորդում է գնդապետ Պաստրյուլինը,– ընթացիկ տարվա ամռանը ենթադրվում է հրավիրել Հայ հեղափոխական դաշնակցության անդրկովկասյան կազմակերպության ներկայացուցիչների համագումար: Ներկայումս այդ հարցին սերտ առնչություն ունեն Թիֆլիս քաղաքում բնակվող Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը և Խարկովի համալսարանի նախկին ուսանող Գեորգ Ալեքսանդրի Մինասյանը»[7]: 1911 թ. հունիսին Ավետիս Ահարոնյանը և Ավետիք Իսահակյանը Թումանյանի բնակարանում համոզում էին բանաստեղծին իրենց հետ փախուստի դիմել՝ անցնելով Ղարսի վրայով Թուրքիա, այնտեղից էլ՝ Եվրոպա: Բայց Թումանյանը չի համաձայնում: Զգալով հանդերձ վտանգը՝ բանաստեղծը չէր ընկրկում աքսորի ու տաժանակրության հեռանկարի առջև: Եղբոր՝ Վահանի հետ զրուցելիս Թումանյանը ասում է. «Ավոն էլ Ղազարոսի նման է մտածում, թե կառավարության ագենտները կարող են վնաս հասցնել ինձ. ես էլ շատ բան եմ մտածում, բայց եթե ամենքս էլ վախենանք ու հեռու կենանք, ի՞նչ կլինի մեր ժողովրդի դրությունը. կոտորածն ավելի սուր կերպարանք կստանա, և մեր ապրելը մեր ժողովրդի համար գրոշի արժեք չի ունենա»[8]:

Պետերբուրգի սենատի հատուկ կարգադրությամբ Թումանյանին երկրորդ անգամ բանտարկեցին 1911 թ. հոկտեմբերի 31-ին: Շուրջ 40 օր բանտում մնալուց հետո Թումանյանը 1911 թ. դեկտեմբերի 14-ին մի խումբ կալանավորների հետ ապրանքատար վագոնով ուղարկվեց Պետերբուրգ[9]: Ահա թե ինչպես է այդ օրը հիշում բանաստեղծի դուստրը՝ Նվարդը. «Մենք բոլորս՝ մայրիկն ու երեխաները անհամբեր սպասում էինք բանտարկյալների դուրս բերելուն:

Օրը մթնում էր արդեն, երբ բանտի դռները ճռնչալով բացվեցին...

---

6 Նույն տեղում:

7 ՀՔՀԻ (Հայաստանի քաղաքական հետազոտությունների ինստիտուտ) արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 99, թ. 4:

8 Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 243:

9 «Հորիզոն», լրագիր, Թիֆլիս, 1911, N286:

Մեզ վրա շատ ծանր ազդեց բանտարկյալների ոտքերի շղթաների զրնգոցը. դնում էին շարքերով՝ շրջապատված հրացանավոր ոստիկաններով: Հայրիկը և մի երկու հոգի առանց շղթաների էին: Ասում էին, որպես ազնվական ծագում ունեցողների, ազատել էին շղթաներից»[10]:

Միևնույն գործով դատի էին կանչված 159 հոգի. ահա թե ինչու Պետերբուրգի սենատի հատուկ ատյանում քննվող այդ գործը հայտնի էր ինչպես «Դաշնակցության գործ», այնպես էլ «159-ի դատավարություն» անունով: Բայց 159-ից ներկա էին 146-ը:

Դատական նիստերը տեղի էին ունենում ամեն օր ժամը 12–15, 16–19-ը: Ընդհանուր գործի դատավարությունը սկսվել էր հունվարի 17-ին, երեքշաբթի օրը: Նիստերը դռնփակ էին: Դահլիճում կարող էին գտնվել միայն մերձավոր ազգականները: Թումանյանի հարազատներից այնտեղ էին դուստրը՝ Աշխեն Թումանյանը և որդին՝ Մուշեղը, որն այն ժամանակ Պետերբուրգի համալսարանի բնագիտական բաժնի ուսանող էր: 1912 թ. մարտի սկզբին ավարտվեց բոլոր մեղադրյալների հարցաքննությունը: Մարտի 8-ին մեղադրական խոսքով հանդես եկավ դատախազ Աբերգեևը, որի ճառը տևեց երեք օր, մինչև մարտի 10-ը: Նա առաջարկեց 15 հոգու, այդ թվում նաև Թումանյանին անպարտ ճանաչել: Մարտի 11-ից սկսեցին հանդես գալ դատապաշտպանները: Նրանց ելույթները տևեցին մեկ շաբաթ: Մարտի 20-ը դատավարության վերջին օրն էր: Դատավոր Կրիվցովը առաջարկեց ազատ արձակել 94 հոգու, այդ թվում նաև Թումանյանին: Հսկայական աղմուկ հանած այդ գործը անսպասելիորեն լավ վախճան ունեցավ: Ըստ Լեոյի հավաստիացման՝ ցար Նիկոլայ Երկրորդը հայ բանտարկյալներին ազատելու և արդարացնելու խնդրանքով իրեն ներկայացած հայոց կաթողիկոս Իզմիրլյանին պատասխանել էր. «Մինչև դուք տեղ կհասնեք, ամենքն արդեն ազատված կլինեն»[11]:

Դատավարության ավարտից երկուսուկես շաբաթ հետո, այցելելով Նիկողայոս Մառին, Վարգգես Սուրենյանցին, ռուս գրող Կորոլենկոյին և ուրիշների, Թումանյանը ապրիլի 8-ին դստեր՝ Աշխենի և փեսայի (որը նաև իր գործով դատապաշտպաններից մեկն էր)՝ Դևորգ Խատիսյանի հետ մեկտեղ ուղևորվեց Մոսկվա: Իսկ ապրիլի 19-ին նա արդեն Թիֆլիսում էր:

Պետերբուրգի իր բանտախցում (N 121) դատական նիստերից առաջ և հետո, առավոտյան մինչև ժամը 12-ը և երեկոյան ժամը 7-ից հետո, Թումանյանը բավականին հետաքրքիր գրառումներ է կատարել մի օրագրում: Դա չափազանց կարևոր փաստաթուղթ է, պատմական նշանակության մի վավերագիր, որն արտացոլում է ինչպես 1905–1906 թթ. Թումանյանի ծավալած ազգային գործունեության զգալի թվով մանրամասներ, այնպես էլ՝ բանաստեղծի գրական հետաքրքրությունները այդ շրջանում: Բանտի օրա-

---

10 Ն վ ա ր դ Թ ո ւ մ ա ն յ ա ն. Հուշեր և զրույցներ. Երևան, 1987, էջ 95:

11 Լ ե ո. Անցյալից, էջ 226:

գրում տեղ են գտել բանաստեղծի գեղարվեստական մի ստեղծագործություն՝ իր դատապաշտպան Օսկար Գրուզենբերգին նվիրված բանաստեղծությունը («Երկու հոգի»), և Вечерний звон-ի տողացի թարգմանությունը: Սակայն հիմնականում Բանտի օրագրում եղած գրառումները ինքնակենսագրական բնույթի են, երբեմն չարագրված հստակ ու պարզ, ավելի հաճախ կցկտուր՝ նշումներ, անունների թվարկումներ, ինչ-որ գեպքերի չափազանց անորոշ հիշատակումներ:

Բանտում, ինչպես հավաստում են տետրում արված գրառումները, Թումանյանին հնարավորություն են ավել ծանոթանալ առավել կարևոր գործերով քննիչ Ն. Լիժինի պատրաստած նյութերին, որոնք ամփոփվել էին 7 մեծադիր հատորներում՝ կազմելով 40 000 էջ և տպագրվել էին գաղտնի, Նովոչերկասկում, հատուկ պայմաններում, դատավարությանը զուգընթաց[12]:

Թումանյանը օրագրում նշում է այդ հրատարակության այն էջերը, որոնցում տպագրված են իր դեմ տրված մեղադրական ցուցմունքների, հարցաքննությունների արձանագրությունները: Ի դեպ, ո՛չ Թումանյանի, ո՛չ էլ նրա վկաների հարցաքննությունների արձանագրությունները առայսօր չեն հրատարակվել: Թումանյանի հետ կապված նյութերը 135 փոքրագիր հատորներից 21-րդում են, իսկ 7 հատորյակից՝ 5-րդում: Այդ արձանագրությունների մեջ Լիժինը արել էր բազմաթիվ կեղծիքներ: Բանտի օրագրում Թումանյանը գոհունակությամբ նշում է, թե ինչպես դատարանում բացահայտվեցին նրա կատարած զանգվածային կեղծումները և հատկապես վկաների տված ցուցմունքների խարդախումները:

Դատավորը այլևս հավատ չէր ընծայում Լիժինի հարցաքննություններին և միշտ հարցնում էր, թե ո՞վ է վերցրել ցուցմունքները: 1912 թ. մարտի 3-ին դատապաշտպաններ Զարուդնին, Սոկոլովը, Սկարյատինը, Պերևերզևը, Բարտը պաշտոնական դանգատով դիմեցին դատարանի նախագահին, որով մեղադրում էին Լիժինին և պահանջում նրան պատասխանատվության ենթարկել: Նախագահը՝ Կրիվցովը, կարգադրում է վճռաբեկ դատարանին միացյալ նիստում քննարկել Լիժինի վարքագիծը: Հենց այդ նիստում էլ առաջարկում էր դատի տալ նրան՝ մեղադրելով քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով[13]: Լիժինին հեռացրեցին դատավարությունից և նրա հանդեպ գործ հարուցեցին 303-րդ հոդվածով: Սակայն այդ գործը ձգձգվեց և ի վերջո դադարեցվեց: Ահա թե ինչ է գրում այդ մասին Թումանյանը Բանտի օրագրում. «Ամբողջ դատը կեղծիք բաց անելու վրա էր: Դատապաշտպաններն էլ էին կեղծիք կատարել...Լիժինն էլ էր կեղծիք կա-

12 «Մշակ», Թիֆլիս, 1912, N 10:
13 «Հորիզոն», Թիֆլիս, 1912, N 49,51:

տարել, երբ որ երկու կողմի կեղծիքն էլ բացվեց, հետևանքն այն եղավ, որ մեզ թողին, նրանց պատժեցին»[14]:

Լիժինի հատորներում ծանոթանալով իր վկաների ցուցմունքներին՝ բանաստեղծը գրի է առել իրեն ներկայացրած կոնկրետ մեղադրանքները և արտահայտել գրանց շուրջ իր մտորումները: Հայտնի է, որ դեռևս 1905-1906 թթ., երբ Թումանյանը կատարում էր իր խաղաղասիրական առաքելությունը Լոռու և Բորչալուի շրջանում, հետապնդվում էր «Շմակով», ավելի ուշ՝ «Մանասյանց Ստալնոյ» կեղծանուններով գործակալների կողմից, որոնք այդ շրջանից Թիֆլիսի ժանդարմական վարչություն էին ուղարկում «Жокей»-ին վերաբերող (ոստիկանական փաստաթղթերում Թումանյանը այդ կեղծանունով էր հետապնդվում) վայրիվերո, սուտ և իրարամերժ լուրեր: Այդ անհեթեթ մեղադրանքները, որոնց հեղինակը ամենայն հավանականությամբ հիշյալ կեղծանունների տակ թաքնված Հարությունն (համագյուղացիների համար՝ Շահբազ) Շահվերդովն էր, հիշատակվում են նաև Բանտի օրագրում: Դրանք այն մասին են, իբր Թումանյանը միջնորդ է դաշնակցության և գյուղական կոմիտեների միջև, իբր դաշնակցությունից 10 000 ռուբլի է վերցրել և կաշառել շրջանի ղեկավարությանը, Ավետիք Իսահակյանի հետ միասին մասնակցել է ինչ-որ տեռորիստական խմբի, որ նրա հրամանով սպանել են երեք թուրքերի, ինչ-որ խեղճ անտառապահի, որ նա դարձել է Լոռու շրջանի գեներալ-գուբերնատոր, որին ենթարկվում էր ամբողջ տեղական ղեկավարությունն ու ոստիկանությունը, որ նա շրջելով գյուղերը՝ ամենուրեք դատ ու դատաստան է տեսնում, գյուղերից պահանջում է տուգանք մինչև 500 ռուբլի և այլն, և այլն...

Առհասարակ օրագրում զգալի տեղ են գրավում բանաստեղծի մտորումները իր անմեղությունը հաստատելու համար: Նա բերում է փաստեր, անուններ, վավերագրեր, որոնք կարող էին օգտակար լինել իր արդարացման գործում: Մի քանի անգամ հիշատակում է Լոռու և Բորչալուի շրջանի դավառապետներ Կ. Զ. Շանշիևին, Ն. Կ. Ռեզանովին, որոնք ժամանակին հրապարակավ չնորհակալություն էին հայտնել Թումանյանին խաղաղասիրական գործունեության համար: Բանաստեղծը դիտեր, որ պահպանվել են նրանց հետ իր վարած բանակցությունների գրավոր վկայությունները, որոնք անպայման գրական դեր կխաղային արդարացման գործում[15]:

Թումանյանը բազմիցս անդրադառնում է գրեթե միայն Հարությունն Շահվերդովի զրպարտագրերին, որովհետև նա բանաստեղծի հայ և այլ ազգերի բոլոր վկաների մեջ միակն էր, որը չէր հրաժարվում իր հերյուրանքներից և դատարանում խոսեց ի վնաս բանաստեղծի: Մնացած վկաները՝

---

14 Հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով. հ. 8, Երևան, 1999, էջ 338:

15 Տե՛ս Թումանյանի 1909 թ. հունվարի 4-ի խնդրագիրը ռոտմիստր Պրիգարային (Հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ուսումնասիրություններ և հրապարակումներ. հ. 3, Երևան, 1983, էջ 335):

ազգությամբ թուրքեր և ռուսներ (Մահմադ Վեքիլով, Նիկոլայ Ռեզանով, Վասիլի Զոլոտարյով) դատարանում հրաժարվեցին Թումանյանի դեմ ասված յուրաքանչյուր բառից, պնդելով, որ դա արել են ստիպողաբար, կամ պարզապես հայտարարեցին՝ քննիչներն են կեղծել իրենց ցուցմունքները: Նրանք բոլորը, այդ թվում նաև ազգությամբ թուրք Մահմադ Վեքիլովը, դատարանում հիացմունքով խոսեցին Թումանյանի խաղաղասիրական գործունեության մասին՝ բարձր գնահատելով նրա ստանձնած դժվարին դերը այդ ծանր ժամանակամիջոցում:

Հիրավի, Շահվերդովի գրավոր և բանավոր տրված ցուցմունքները բացահայտ զրպարտություններ էին, կեղծիք և սուտ, հիվանդագին երևակայության արտահայտություն: Նա բանաստեղծին մեղադրում էր իբրև դաշնակցության ղեկավարներից մեկի, որն իբր կազմակերպել էր կառավարական պաշտոնյա Արշակ Փերիխանովի սպանությունը: Իբր Փերիխանովը մատնել էր հեղափոխական Սարգիս Սոլովյանին, վերջինս էլ թաքնվել էր Թումանյանի դաշնակցական գործերով օգնական Արտուշ Քոչարյանի մոտ: Ըստ Շահվերդովի՝ Թումանյանն է ղեկավարել զենք գնելու նպատակով ժողովրդից հանգանակություն կազմակերպելու գործը: Նա Իգահատում (Այգեհատ) Արտուշ (Արտեմ) Քոչարյանի հետ դաշնակցության բաժանմունք է ստեղծել և Լոռու շրջանի բոլոր գյուղերում կոչ է արել չենթարկվել ռուսական կառավարությանը, հարկեր չվճարել, չդիմել դատարաններ և այլն: 1910 թ. օգոստոսի 27-ին հարցաքննության ընթացքում Շահվերդովը հայտարարում է. «1905–1907 թթ. մեր գյուղում՝ Իգահատում, Հովհաննես Թումանյանը և Արտեմ (Արտուշ) Ստեփանի Քոչարյանը ստեղծեցին դաշնակցության բաժանմունք: Ղեկավարը Հովհաննես Թումանյանն էր, իսկ Քոչարյանը օգնականն էր: Նրանք ստեղծեցին զինված դրուժինա... Նա (Թումանյանը – Ս. Հ.) իրեն գուբերնատորի պես էր պահում, գալիս էր 30 հոգուց կազմված զինված ջոկատի հետ... Այդ զինվորները Թումանյանի և Քոչարյանի հանձնարարությամբ հավաքում էին «Դաշնակցություն» կուսակցությանը զինելու համար դրամ: Ով չէր վճարում, նստեցնում էին նկուղներում, բանտերում՝ ստիպելով վաճառել վերջին հավերը: Հովհ. Թումանյանը գնում էր դրոշով (ինչ դույնի, չգիտեմ), հենց հասնում էր ռուսական գյուղին՝ դրոշը թաքցնում էր»[16]:

Շահվերդովը պնդում էր նաև, որ Թումանյանի ուղարկած զինված խումբը փորձել է իրեն սպանել, բայց չի կարողացել, որ բանաստեղծը 300 թե 400 ռուբլի է վերցրել ոմն Գրիգոր Շահվերդովից, որը բողոքել է գավառապետին և Թումանյանն էլ վախեցած մի մասը ետ է վերադարձրել: Ի դեպ, Թումանյանը Բանտի օրագրում այդ ցուցմունքից բառացի արտագրություններ է անում և փորձում է մեկ առ մեկ ոչ այնքան բացատրությունների, որքան տրամաբանական հարցադրումների միջոցով հերքել

16 ՊԿՊԱ, Следственные материалы по делу партии "Дашнакцутюн". հ. 1, էջ 428:

այդ անհեթեթությունները՝ չխուսափելով ներկայացնել Շահվերդովի անձն ու կյանքի որոշ դրվագներ, որոնք ըստ էության բնութագրում էին Թիֆլիսի պահնորդական բաժնի այդ լրտեսին: Նա ունեցվածքին (այգուն) տիրանալու համար սպանել էր իր հարազատ եղբորը: Հավանաբար իր պաշտոնական խոսքը կառուցելիս Թումանյանը կամենում էր դիմել դատախազին ու դատավորին, որ նրանք հավատ չընծայեն մարգասպանի խոսքերին. «Չէ՞ որ դուք դիտեք, որ նա սպանել է եղբորը, և ինքն էլ խոստովանել է»[17]: Թումանյանը վկայակոչում է նաև համագյուղացիների իրեն ուղղված դիմումը Շահբազ Շահվերդովին հասարակությունից հեռացնելու խնդրանքով և իր վերաբերմունքը այդ առաջարկին: Նա թույլ չի տալիս հայրենակիցներին պատժել կամ հեռացնել Շահբազին՝ վստահեցնելով, որ բարոյական պատիժը ավելի կարևոր է. «Թող նա ողջ մնա, և մարդիկ ասեն՝ սա էր Թումանյանին մատնողը»[18]:

Շահվերդովի վայրիվերո ամբաստանություններին պատասխանելիս բանաստեղծը թե՛ քննիչին տված պաշտոնական ցուցմունքներում և թե՛ Բանտի օրագրում հայտնում է ինքնակենսագրական բնույթի մի շարք տեղեկություններ, տալիս է որոշակի բացատրություններ և անձամբ պատմում է 1905-1906 թթ. իր գործունեության մասին: Նախ կտրուկ հերքում է իր կողմից գումարներ հավաքելու մեղադրանքները, թեև հավաստում է, որ, իրոք, դաշնակցության անունից եղել են գյուղի բնակիչներից փող հավաքողներ. ոմն Սուրեն, Մուշեղ և Սամսոն, որոնք, առիթից օգտվելով, շահարկելով կուսակցության անունը, փորձել են հարստանալ: «Սակայն,– ասում է Թումանյանը,– գյուղի բնակիչների և պատվավոր անձանց ժողովում ես արժանի հակահարված տվեցի այդ թալանիչներին և կոչ արեցի չենթարկվել հակաօրինական այդ պահանջներին»[19]: Ինչ վերաբերում է սպանություն կազմակերպելու մեղադրանքին, Թումանյանը դա համարում է հոգեպես աննորմալ մարդու մտացածին անհեթեթություն: Ի դեպ, սա միայն Թումանյանի կարծիքը չէր: Դատաքննում նրա վկաներից և՛ Ռեզանովը, և՛ Զոլոտարյովը հայտարարեցին, որ Շահվերդովը «հետապնդման մանիայով» տառապող հոգեկան հիվանդ է:

Բանաստեղծն ընդունում է միայն, որ հայերի ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկը ինքն է եղել, բայց կարծում է, որ ռուսական կառավարությունը, հանձինս Ռեզանովի վարած քաղաքականության, նույնպես դեմ չի եղել ինքնապաշտպանությանը: Օրագրում կան որոշ գրառումներ դաշնակցականների ծավալած ինքնապաշտպանական գործունեության մասին Լոռու և Ղազախի շրջանում: «Ղազախի գավառը,–

---

17 Հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 8, էջ 630:

18 Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 244:

19 Հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 8, էջ 333:

գրում էր Թումանյանը,– ինքնապաշտպանության հիմքի վրա իրեն կոչեց դաշնակցական»[20]:

Սակայն այդ ժամանակամիջոցում Լոռիում հրավիրված հայրենակիցների խորհրդակցություններում Թումանյանը բոլոր կուսակցություններին առաջարկել է թողնել շրջանը:

Ինքը՝ բանաստեղծը, Լոռի էր գնացել հայրենակիցների խնդրանքով: Այդ մասին վկայում է թե՛ Թումանյանը իր Բանտի օրագրում և թե՛ նրա վկաներից մեկը՝ Թիֆլիսի քաղաքագլուխ, մասնագիտությամբ իրավաբան Ալ. Խատիսյանը:

Հայ-թուրքական ընդհարումները Բաքվում սկսվել էին 1905 թ. փետրվարի 6–9-ը ընկած ժամանակամիջոցում և տարածվել ամբողջ շրջանում՝ հասնելով Թիֆլիս, ուր նոյեմբերի 22–30-ը հայտարարվեց ընդհանուր ռազմական դրություն: Թիֆլիսում փակվեցին դպրոցները, և Թումանյանը ընտանիքով փոխադրվեց Շուլավեր, ապա՝ Դսեղ: «Հոկտեմբերի 17-ից հետո սկսեցին անկարգությունները Թիֆլիսում, վերցրեցի ընտանիքս և հեռացա Շուլավեր նոյեմբերի սկզբին»,– գրում է բանաստեղծը: – Ըստ Բանտի օրագրում արված գրառումների՝ Թիֆլիսում Թումանյանի մասնակցությամբ տեղի էին ունենում բազմաթիվ խորհրդակցություններ հայերին ու թուրքերին խաղաղացնելու նպատակով: Բայց միևնույն է, Թիֆլիսում հանգիստ նստել չէր կարելի, որովհետև «հայրենիքից ստանում էի տագնապալի լուրեր»,– նշում է գրողը[21]: Բացի այդ Թումանյանը իր քաղաքական ասպարեզ նետվելու և գրական խաղաղ աշխատանքը, իր աշխատասենյակը թողնելու պատճառը համարում է 1905 թ. սկիզբ առած այն դժոխային սարսափները, որոնց անունն է հայ-թաթարական կռիվներ: «Դա արդեն ինձ համար,– գրում է բանաստեղծը.– ֆեդերացիայի կամ հանրապետության խնդիրը չէր, այլ հարազատ ժողովրդի և հայրենիքի կյանքի խնդիրը»[22]:

«...Բայց նորից ու նորից սպանությունների մեջ, հրդեհների մեջ զբաղված էի խաղաղության ու հաշտեցման գործով և կատարում էի ոչ թե կուսակցական մարդու գործ, և նույնիսկ ոչ թե հայի, այլ մարդու... Եվ այն սպիտակ դրոշակը, որ անկարգությունների ամբողջ ժամանակամիջոցին ես բռնել էի իմ ձեռքում, երբեք բաց չեմ թողել ո՛չ Ղարախաչի հրդեհի առջև, ո՛չ այն ժամանակ, երբ հարձակվում էին, ո՛չ նույնիսկ այն սարսափելի գիշերը, երբ թաթարները շրջապատել էին Շուլավերը, որտեղ գտնվում էին կինս և երեխաներս և ուզում էին մորթել»[23]:

Այդ մասին հետագայում իր հուշերում գրում է նաև Նվարդը, որն իր քույրերի հետ միասին Շուլավերում էր, իսկ եղբայրները հայրիկի հետ էին.

---

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում, էջ 327:

22 Նույն տեղում, էջ 328:

23 Նույն տեղում, էջ 332:

«Ահն ու վախը զգում էինք մեր շրջապատում, մարդկանց հարաբերությունների մեջ, առօրյա կյանքում, նույնիսկ օդում: Մարդիկ խոսում էին ցածր ձայնով. զգույշ, ամեն ինչ արվում էր լուռ, ծածուկ, գաղտագողի:

Լուր եկավ, որ ներքին Շուլավերից թուրքերը հարձակվում են»[24]:

Թումանյանի եղբայրը գավառապետի տրամադրած 12 հոգուց բաղկացած զինված պահակախմբի ուղեկցությամբ կարողանում է բանաստեղծի ընտանիքը հասցնել Քոլագերան կայարան, ուր սպասում էր նրանց Հովհաննես Թումանյանը:

Բանտի օրագիրը մեր առջև բացում է նաև մինչև օրս բանաստեղծի կյանքի գրեթե անծանոթ էջեր, պատմում է գործունեության մի նոր ոլորտի մասին, հաղորդում է տեղեկություններ, որոնք այլ աղբյուրներից մեզ հայտնի չեն: Դա, այսպես կոչված, իրավաբանության ասպարեզն է, հանցագործ աշխարհի դեմ պայքարի գործում Թումանյանի ունեցած մի քանի հաջողությունները: Հայտնի ճշմարտություն է, որ ազգամիջյան բախումների, անցումային կամ հեղափոխական շրջաններում սովորաբար, երբ կյանքը գուրս է գալիս իր բնական հունից, մեծ չափով աշխուժանում են հանցագործ տարրերը, հիմնականում գողերն ու թալանչիները, սադրիչները, ազգային խնգիրները շահարկելով հարստացողները. «Ես բացահայտ գործել եմ,– հայտարարում է Թումանյանը,– սադրիչների դեմ, կրքեր բորբոքողների դեմ, տարբեր հանցախմբերի դեմ, ովքեր զբաղվում էին թալանով, շորթումով»[25]:

Իսկ 1911 թ. մայիսի 26-ի նրա հարցաքննության արձանագրության մեջ հիշատակվում է, որ Թումանյանը պայքարել է կարմիր կնիքներով, իբր կուսակցության անունից սպառնալիքներով գյուղի բնակիչներից դրամ պահանջողների դեմ:

Ինչպես պարզվում է օրագրում արված գրառումներից՝ Թումանյանը անձամբ բացահայտել է երկու սպանություն, մեկ գողություն և փորձել է դադարեցնել երկու ավազակախմբերի գործունեությունը: Հավանաբար Թումանյանը փորձել է գտնել նաև եղբորը սպանելուց հետո դազախի թաթարների մոտ ապաստանած Հարություն Շահվերդովին: Վերջինիս ամբաստանագրերը Թումանյանի դեմ պայմանավորված էին նաև դրանով: Համենայն դեպս, բանաստեղծի կարծիքով, իր կեղծ ցուցմունքներում ու զրպարտագրերում Շահբազը առաջնորդվել է վրեժի զգացումով:

Հանցագործ աշխարհի դեմ ունեցած իր պայքարի մասին ահա թե ինչ է գրում ինքը՝ բանաստեղծը. «...Այդ խառը ժամանակներում գործել սկսեցին բոլոր մութ ուժերը, բոլոր հանցագործները: Ինչ-որ Սիմոն մորթեց երկու վաշխառու հրեաների, ինչը ես բացահայտեցի, Քոլագերան կայարանում մորթեցին երկու թաթարների, ինչը ես բացահայտեցի: Ինչպես վկա-

---

24 Ն վ. Թ ու մ ա ն յ ա ն. Հուշեր և զրույցներ, էջ 84:

25 Հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 332:

յում է կայարանի ադմինիստրացիան, մի բանդա հարձակվեց Շահալի-Էլիար գործարանի վրա, գողացան փողերը, ես բռնագանձեցի ու հանձնեցի տուժածներին՝ պրիստավի միջոցով ես վավերացրեցի համապատասխան ատյանում: Կայարանը թալանել էր Զուբինովի հայտնի բանդան, Շահվերդովի բանդան: Այդ ժամանակ ձեզ հայտնի Հարությունն Շահվերդովը, որը եղբոր հետ ունեցվածքի ինչ-որ վեճ ուներ, սպանեց նրան»[26]: Ավելի ուշ Թումանյանը դրում է, որ Շահբազին կարողացան գտնել միայն երկու տարի հետո, Ղազախի թաթարների մոտ: «Բայց նրանք պետք է վրեժխնդիր լինեին: Բայց ո՞ւմ, ահա նրանց, ովքեր հետապնդեցին և բացահայտեցին իրենց հանցագործությունները»[27]:

Թումանյանի խաղաղասիրական գործունեության մասին խոսելիս սովորաբար ընդունված է հիշել միայն նրա բարձրացրած սպիտակ դրոշը, հաշտության խաղաղ խոսքը, մինչդեռ Թումանյանը իր հետ տանում էր նաև կարմիր՝ կռվի դրոշը՝ Դեռ լոռեցիներին ուղղված իր նշանավոր կոչում Թումանյանը հայտարարում է, որ իր հայրենակիցները չեն ցանկանում կռվել, որովհետև «եթե ուժեղ ենք,– անիրավություն է, եթե թույլ ենք, հիմարություն է... և եթե այդ անկարելի եղավ, մենք ինքներս դուրս կգնանք նրանց դեմ և անխնա...»[28]:

Եվ քանի որ աղերի թաթարները հակված չէին խաղաղության, Թումանյանը հենց այդ արյունահեղությունը դադարեցնելու համար չհրաժարվեց զենքի ուժով պայքարելուց, զորքով ու զորագնդերով խաղաղություն հաստատելուց: Թե՝ աղերի թաթարների և թե՝ հանցագործության դեմ պայքարում Թումանյանին օգնության հասավ ռուսական Հյուսիսային զորագունդը, որը դրվեց նրա տրամադրության տակ: Բանաստեղծը Խրիմյան Հայրիկի միջոցով էր հասել այն բանին, որ Թիֆլիսի զինվորական շտաբը մի էսկադրոն ուղարկի հայ-թաթարական ընդհարումները դադարեցնելու համար: Այդ էսկադրոնը Ալեքսանդրապոլի Սևերսկի գնդից Քոլագերան կայարանը հասավ 1905 թ. դեկտեմբերի սկզբին: Կայարանում էսկադրոնին դիմավորել էր անձամբ Թումանյանը: Բանտի օրագրում նշվում է այս մասին, որովհետև 1912 թ. սենատում անհրաժեշտ է եղել պարզել այդ էսկադրոնի գալու և վերադառնալու հանգամանքը: Այդ դունդը իր հրետանին ուղղել էր աղերի թաթարների դեմ, միաժամանակ հետապնդել էր տեղի հանցագործ խմբերին, հատկապես Զուբինովի, Սիմոնի և Դավիթ Շահվերդովի: Այսպիսով, Թումանյանի տրամադրության տակ էր դրվել ռուսական զորքն ու զենքը, և նա կարողացել է այն օգտագործել հայերի զինված ինքնապաշտպանությունը ուժեղացնելու նպատակով: Ընդ որում, Թումանյանը ավելի կարևորում է պաշտպանությունը, վստահ լինելով, որ ժողովր-

26 Նույն տեղում, էջ 346–347:

27 Նույն տեղում, էջ 348:

28 Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու. հ. 6, Երևան, 1994, էջ 146:

դին պետք է պաշտպանի նախ պետությունը, բանակը, զորքը, և լավ պաշտպանության դեպքում ինքնապաշտպանության կարիք չի էլ լինի: Ահա թե ինչու Թումանյանը ասում է. «Եվ ես սկսեցի իմ գործունեությունը ոչ թե ինքնապաշտպանությունից, այլ պաշտպանությունից»[29]:

Թումանյանը իր գործողությունները հաճախ էր համաձայնեցնում տեղի դավառապետների՝ Կ. Զ. Շանչիևի, Ն. Կ. Ռեզանովի, Դ. Հ. Բակրաձեի, շրջանի ժամանակավոր գեներալ-նահանգապետ Վասիլի Զոլոտարյովի հետ: Հաշվի առնելով Թումանյանի մեծ հեղինակությունը երկու ժողովուրդների մեջ, նրանք հաճախ էին տարբեր նպատակներով ղինված պահակախմբեր դնում բանաստեղծի տրամադրության տակ: Թումանյանին տրված էր գործողությունների որոշակի ազատություն: Նրան թույլատրում էին հրավիրել լոռեցիների խորհրդակցություններ, հանրահավաքներ, այսինքն՝ Թումանյանը կարողանում էր օգտվել ռուսական իշխանություններից, նրանց զորքից ու զենքից, ազգային մեծ ու փոքր խնդիրներ լուծելու համար: Կարողանում էր ազատել թուրք պատանդներին և վերադարձնել իրենց գյուղերը, աներկյուղ լինում էր թուրքաբնակ վայրերում: Ահա թե ինչու Թումանյանը գտնում էր, որ չպետք է հայերը միանային ռուսական իշխանությունների դեմ հեղափոխական պայքարին: Որովհետև զայրացնել իշխանություններին այն պահին, երբ դրված էր ազգի ֆիզիկական ընաջնջման, հայրենիքի լինել-չլինելու հարցը, չէր կարելի: Թումանյանը համոզված էր, որ երբ դրված է ազգային պաշտպանության և հատկապես ինքնապաշտպանության դերխնդիրը, ապա այդպիսի շրջանում հեղափոխության կոչերը դառնում են ավելորդ. «Վերջին շրջանում,– գրում է Թումանյանը Բանտի օրագրում,– գործի անցավ մտավորականությունը, որի մի մասը կրթվել էր ռուսական համալսարաններում և ցանկանում էր հեղափոխության ոգի պատվաստել հայկական ինքնապաշտպանությանը, և ահա դուրս եկավ այդպիսի շիլափլավ»[30]:

Թեև Թումանյանը թե՛ իր ցուցմունքներում և թե՛ Բանտի օրագրում հերքում է իր և դաշնակցական կուսակցության միջև եղած որևէ առնչություն և վստահեցնում է, որ նույնիսկ տեղյակ չէ այդ կուսակցության ծրագրին և նպատակներին, բայց, անշուշտ, դաղտնիք չէ, որ բանաստեղծը համակրել է այդ կուսակցությանն ու նրա շատ նշանավոր գործիչների և չի բացառվում, որ կարճ ժամանակով անդամակցել է: Այդ մասին վկայություն կա Արշակ Ջամալյանի հուշերում, որի հավաստիացմամբ 1905 թ. ապրիլին դաշնակցության կովկասյան առաջին շրջանային ժողովին մասնակցել է Թումանյանը՝ որպես Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ[31]: Այդ մասին կա նաև բանաստեղծի անուղղակի խոստովանությունը՝ բա-

29 Նույն տեղում, հ. 8, էջ 333:

30 Նույն տեղում, էջ 345:

31 «Վեմ» հանդես, Փարիզ, 1932, N 2:

նաստեղծի ձեռքով գրված մի պատառիկ. «Ես երբեք ինձ սոցիալիստ չեմ անվանած, ինչպես և քրիստոնյա, որովհետև մի քիչ ծանոթ եմ թե՛ սոցիալիզմի էության և թե՛ Ավետարանին և տեսնում եմ, որ ո՛չ մեկն եմ, ո՛չ մյուսը: Եվ եթե որևէ սոցիալիստական խմբակցության էլ կապված եմ եղել ու շատ կարճ միջոցով, ապա կապված եմ եղել ոչ թե ծրագրային կապով, այլ լոկ ընկերական, և կոնկրետ գործի շուրջը»[32],– ասված է այդ ձեռագիր պատառիկում: Ահա այդ լոկ ընկերական և կոնկրետ գործը 1905–1906 թթ. հայերի ինքնապաշտպանությունն էր: Հարազատ ժողովրդին, նրա հողն ու հայրենիքը պաշտպանելու սրբազան գործը Թումանյանի համար վեր էր ցանկացած կուսակցական շահից, քանի որ այն պահանջում էր համազգային ու համընդհանուր նվիրում, ժողովրդի լավագույն ուժերի համախմբում: Միակամ ազգ, մեկ բռունցք ընդհանուր թշնամու և արհավիրքի դեմ: Դրա համար էլ Թումանյանը միանգամայն անկեղծ էր ազգային հարցը, հատկապես ինքնապաշտպանության խնդիրը հեղափոխական պայքարին զուգակցող մտավորականներին դատապարտելիս. «Ավելի անգիտակից մի բազմություն,– գրում է Թումանյանը Բանտի օրագրում,– քան թե այս նստած գիտակից ընկերների բազմությունն է, ես տեսած չեմ: Զգիտեն ո՛չ պատմությունը իրենց ժողովրդի, ո՛չ իր երկիրը, ո՛չ էսօրը, ո՛չ իր հարևանին, ո՛չ նրա միտքը, ո՛չ իր տարածքը, ո՛չ անելիքը»[33]:

Ինքնապաշտպանությունը հեղափոխության հետ նույնացնելը համարում է սուտ ու կեղծ գաղափար. «Եվ սուտն ու կեղծիքը հասցրին այստեղ», – հայտարարում է բանաստեղծը[34]:

Ցպետք է մոռանալ, սակայն, որ Թումանյանը հարգանքով էր վերաբերվում Ռուսաստանում ծավալված հեղափոխական պայքարին, քանի որ սոցիալական և ազգային հավասարության, մարդկության բարօրության գաղափարները հոգեհարազատ էին նրան: Իսկ հայ-թուրքական, թուրք-վրացական ընդհարումները (1907 թ., Բաթում) Թումանյանը համարում էր «ցած ու տմարդի» կռիվ: Դեռ 1906 թ. մայիսի 30-ին, նկատի ունենալով Լոռու և Ղազախի շրջանում հայ-թուրքական ընդհարումները, Թումանյանը Փիլիպոս Վարդաղարյանին ուղղած նամակում գրում է. «Հիրավի, այսքան տգեղ, այսքան լիրբ, այսքան անիրավ, հրեշական կռիվ, ինչ-որ թուրք-հայկականն է, դժվար թե եղած լինի: Գուցե նախապատմական շրջաններում, երբոր մարդիկ իրար ուտում էին:

Մենք այս ցած ու տմարդի կռվով միանգամայն դուրս մնացինք Ռուսաստանի ազատագրական մեծ կռվից»[35]:

---

32 Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 451:

33 Նույն տեղում, էջ 336–337:

34 Նույն տեղում:

35 Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1940–1959 , էջ 299:

Իսկ 1907 թ. ապրիլին Բաթումում տեղի ունեցած թուրք-վրացական և հայ-թուրքական ընդհարումները առիթ են դառնում, որ Թումանյանը բնութագրի և դատապարտի մարդու մեջ եղած գաղանին, նրա վայրենի բնազդները, որոնք կյանքը դարձնում են տանջանք ու դժոխք: Բաթումում նույնպես Թումանյանը մասնակցում է ազգամիջյան ընդհարումների դադարեցմանը և այդ օրերին ընկերոջը՝ Ֆիլիպին, դրում է. «Մարդիկ քիչ են, գազանները՝ շատ: Եվ այժմ ապրում ենք մի ժամանակ, երբ մեծ ասպարեզ կա մարդու էդ վայրենի բնազդին, և նա հանդես է եկել ահռելի չափերով: Գազանությունը դու չգիտես, թե ինչ բան է: Մենք արդեն գիտենք: Եվ ես դրանից և՛ սարսափում եմ, և՛ զզվում, և՛ ամաչում: Դրա համար էլ էս ալեկոծությունների հենց սկզբից ես սիրել եմ ճերմակ դրոշակը և խաղաղարարի պաշտոնը»[36]:

Ահա թե ինչու Թումանյանը, որքան էլ հարգանք ու ակնածանք ունենար ռուս ժողովրդի հեղափոխական պայքարի և սոցիալիզմի գաղափարների հանդեպ, այնուամենայնիվ կարծում էր, որ երբ դրվում է գոյության և հայրենիքը կորցնելու խնդիրը, առաջնայինը դառնում է ինքնապաշտպանությունը:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ ինքնապաշտպանության և ազգային-ազատագրական պայքարի առաջնայնության մասին Թումանյանը գրում է 1912 թ. բանտում, որտեղ բանաստեղծը հայտնվել էր հակակառավարական պայքար ծավալելու մեղադրանքով: Բայց իրականում Թումանյանի հայացքների մեջ ո՛չ մի էական փոփոխություն տեղի չէր ունեցել: Ռուսաստանի «մեծ կովին», որքան էլ ցավալի է, չէր կարող մասնակցել հայ ժողովուրդը, որը, ինչ խոսք, պարտավոր էր, լավ ճանաչելով «իր հարևանին ու նրա միտքը» միշտ պատրաստ լինել պաշտպանելու նախ ի՛ր կյանքը, ի՛ր պատմությունը, ի՛ր հողն ու հայրենիքը:

Բանտի օրագրում Թումանյանը մի քանի անգամ հիշատակում է նաև Լոռու շրջանում գտնվող պղնձի գործարանը՝ Շահալի-Էլիարը, որը պատկանում էր ֆրանսիական մի ընկերության: Ղազախի և Լոռու սահմանագլխի Խանբուլաղ սարի հայերի ու թուրքերի հանրահավաքից հետո Թումանյանը այցելում է այդ գործարանը, հանդիպում բանվորներին, այցելում նրանց բնակարանները, անձամբ լինում է հանքերում: Գործարանի տնօրեն Կաբալը զգուշացրել էր 25 կողակներից կազմված պահակախմբին՝ չմիջամտել Թումանյանի գործերին: Օրագրի գրառումներից պարզվում է, որ Թումանյանը դատարանում կամեցել է հիշեցնել Կաբալից և պարսից դեսպան Արնոլդ-Կանանից ստացած գրավոր շնորհակալության մասին, որին նա արժանացել էր արյունահեղ ընդհարումները դադարեցնելու համար:

Այս շրջանում Թումանյանը հետաքրքրվում էր նաև ժողովրդի սոցիալական վիճակով և փորձում էր կոնկրետ գործերով օգնել համադյուղա-

36 Նույն տեղում, էջ 304:

ցիներին: Պատերազմական իրավիճակում կարևորվում է հացի պաշարների ինդիրը: Եվ Թումանյանը Ավ. Իսահակյանի, իր եղբոր՝ Վահանի, համագյուղացիներից ընտրված մի քանի ներկայացուցիչների (Զումշուդ, Նիկոլ, Ենոք, Սումրաթ և Երվանդ) միջոցով կազմակերպում է երկու վագոն ալյուրի փոխագրումը Ալեքսանդրապոլից Դսեղ: «Հաց չունեցողներին ծախեցին,– գրում է Վահան Թումանյանը,– իսկ չքավոր ընտանիքներին բաժանեցին»[37]:

Թերթելով Բանտի օրագրի էջերը՝ զգում ես, որ բանտարկյալը ոչ թե սովորական քաղաքական մեղադրյալ էր կամ հանիրավի հալածված ազգային գործիչ, այլ գրող, բանաստեղծ, թարգմանիչ, լեզվաբանական և բանասիրական ուսումնասիրությունների հեղինակ: Եվ իրոք, Թումանյանը բանտում չէր մոռացել ո՛չ գրելը, ո՛չ թարգմանելը և ո՛չ, մանավանդ, ընթերցելը:

Բանտում Թումանյանը ռուսերենից հայերեն է թարգմանում Թոմաս Մուրի հայտնի երգի՝ ռուսական ժողովրդական երգ դարձած «Իրիկնային զանգերի» տարբերակը[38]: Միակ դեղարվեստական ստեղծագործությունը, որ Թումանյանը գրել է բանտում, «Երկու հոգի» բանաստեղծությունն է՝ նվիրված դատապաշտպան Օսկար Գրուզենբերգին: Ամեն անգամ բանտախցում Թումանյանին տեսնելիս՝ Գրուզենբերգը մեծ հուզումներ է ունեցել: Նրան անհանգստացնում էր Թումանյանի հանգստությունը, դատական գործի նկատմամբ ունեցած թվացյալ անտարբերությունը: Թվացյալ, որովհետև ինչպես գրում է բանաստեղծի ավագ գուստրը՝ Աշխենը, «...չի կարելի ասել, թե հայրիկը չէր հետաքրքրվում իր գործով: Նա շատ լավ գիտեր բոլորը, գիտեր բոլոր վկաներին, ե՛ լավերին, և՛ վատերին, բայց ինչ-որ ներքին համոզմունք ուներ, որ արդարանալու է»[39]: Այդ են վկայում նաև Բանտի օրագրում Թումանյանի արած գրառումները, վկաների ցուցմունքների շուրջ նրա խոհերը: Իսկ ներքին համոզմունքը հենվում էր գուցե բանաստեղծի կանխազգացման վրա կամ այն երազի, որ նա տեսել էր բանտում, երբ հայրը՝ Տեր-Թադևոսը, նրան լույս ճանապարհ էր ցույց տվել: Պատահական չէ նաև, որ դատարանում բացատրություններ տալիս Թումանյանը վկայակոչել է իր «Բողոքի դեմ» հոդվածը՝ իբրև ապացույց ռուսական կառավարության դեմ ունեցած վերաբերմունքի և վստահեցրել, որ գիտակցելով իր անմեղությունը՝ չափազանց հանգիստ է: «Հանգիստ քնում եմ, համոզված, որ արդարությունը կհաղթանակի և ինձ կարդարացնեն»,– հայտարարել է բանաստեղծը[40]:

---

37 Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 243:

38 Այս թարգմանության մասին հանգամանորեն տե՛ս Պիոն Հակոբյանի հոդվածը, «Գարուն» ամսագիր, 1985, N 8, էջ 85:

39 Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 639:

40 Նույն տեղում, էջ 643:

Թումանյանի արդարացման գործում քիչ չէին նաև իր դատապաշտպանների, հատկապես Գրուզենբերգի ջանքերը, նրա փայլուն ելույթը դատարանում, բողոքը նախաքննության ընթացքում արված կեղծիքների դեմ: Եվ Թումանյանը «Երկու հոգի» բանաստեղծությունը առաջին անգամ ընթերցեց հենց բանտից դուրս գալու օրը՝ մարտի 20-ին «Դոնոն» ռեստորանում, դատական գործի բարեհաջող ավարտին նվիրված ընթրիքին: «Փաստաբաններից ոմանք,–գրում է Աշխենը,– նախանձում էին Գրուզենբերգին, որ հայրիկի գործը նրան էր ընկել: Դատավարության ժամանակ էլ նույնն էին ասում՝ ինչ ազնիվ ու շնորհակալ գործ է, ափսոս իմը չէ»[41]:

Եվ բնական է, որ նրանցից յուրաքանչյուրը կցանկանար, որ Թումանյանի հետևյալ տողերը իրեն նվիրված լինեին.

Եվ օրհնյալ է, ով այդ սիրով
Կյանքի ճամփում ընկնող մարդուն
Պաշտպանում է եղբոր ձեռքով
Տանում դեպի խաղաղություն:

Եվ խաղաղ է նրա հոգին
Կյանքի ամեն ասպարեզում,
Եվ թե երբեք հուզվում է նա,
Սերն է միայն նրան հուզում:

Բանտում Թումանյանը զգալի ժամանակ էր հատկացնում ինչպես գիտական, այնպես էլ գեղարվեստական գրականության ընթերցանությանը: Այստեղ նա թարգմանաբար գրառումներ է կատարել Ռ. Անդերսոնի «Արևելքի կործանված քաղաքակրթությունների պատմությունը», Հ. Հաուպտմանի «Զրասույց զանդը», Ն. Ա. Լեյկինի «Պատմվածքներ, վիպակներ և ստեղծագործություններ», Լ. Ժակոլիոյի «Հնդկաստանի խիտ անտառներում», Օ. Շրեգերի «Համեմատական լեզվաբանություն և նախնադարյան պատմություն», «Հունական դիցաբանություն» գրքերից:

Այդ գրառումներից պարզվում է, որ Թումանյանին մեծ չափով հետաքրքրել են հատկապես արևի ու լուսնի մասին առասպելներն ու ավանդությունները, որոնցից նա հիշատակում է Նթիտրոսի (պայծառ լուսին) սիրահարվելը խորթ որդուն՝ Թեզեոսին (Պոսեյդոնի որդին): Ողջախոհ ու անմեղ պատանին զոհվում է՝ մերժելով այդ սերը:

Ռիգվեդայից հիշատակվում է արևի աստծո դուստր Ախրիայի ամուսնությունը Սոմայի՝ Լուսնի հետ: Բերում է նաև ռուսական ավանդությունը արևի և լուսնի ամուսնության մասին, որոնք կռվել ու հեռացել են և պայմանավորվել, որ հերթով են լույս տալու: Եվ միայն արևի խավարման ժամանակ են մոտենում իրար ու հանդիմանում: Իսկ լիտվական հեքիաթում թեև լուսինն ու արևը դարձյալ ամուսիններ են, բայց լուսինը մի դարնան

---

41 Նույն տեղում, էջ 645:

առավոտ սիրահարվում է լուսաստղին՝ Արուսյակին, իսկ Պերուն բարկանում է և սրով նրան կտրատում: Համեմատելով նույն թեմայով տարբեր ժողովուրդների առասպելները՝ Թումանյանը եզրակացնում է, որ ոչ շոգ բնակլիմայական պայմաններ ունեցող ժողովուրդների համար արևը մեղմ ու հեզահամբույր կին է, իսկ հարավում ընդհակառակը՝ Հելիմսի նման խիստ է և ինքնիշխան, նետերով մահ տարածող, դաշտերի զավակներին սպանող:

Թումանյանին անչափ շատ է հետաքրքրել արևի մասին առասպելի հերոս Դեմուցիի (կամ Դումուզա) և Իշտարի (կամ Իստարի)՝ մեռնող և հարություն առնող աստծո մասին առասպելը, որը նա ոչ թե սոսկ ընթերցել է, այլև խորությամբ ուսումնասիրել է բանտում, ձեռքի տակ ունենալով Ռ. Անդերսոնի «Արևելքի կործանված քաղաքակրթությունների պատմությունը» գրքի Մոսկվայի 1898 թ. հրատարակությունը[42]:

Թումանյանին հետաքրքրել են նաև ճապոնական ավանդությունները ու հեքիաթները, որոնք ֆրանսերենից ռուսերեն էր թարգմանել Բաշանովը: Թումանյանը այնքան մանրամասն է դրի առնում այդ հեքիաթների, հատկապես Բենկեի արկածների հետ կապված սյուժեները, որ ամենայն հավանականությամբ մտադրվել էր հետագայում օգտագործել և լրացնել իր հեքիաթները ճապոնական սյուժեներով:

Թեև Բանտի օրագիրը որոշ չափով պատկերացում է տալիս 1910-ական թթ. Թումանյանի գրական հետաքրքրությունների մասին, բայց այն իր ամբողջության մեջ մի փաստաթուղթ է, գրողի գրչով գրված պատմական անփոխարինելի վավերագիր, որի հիմնական բովանդակությունը բանաստեղծի 1905–1906 թթ. ազգային գործունեության արտացոլումն է և 1912 թ. դատավարության ընթացքը Պետերբուրգում: Այդ վավերագրի դերը խիստ կարևոր է բանաստեղծի կյանքի հենց այդ տխուր էջը լուսաբանելու գործում:

1905–1906 թթ. Թումանյանի խաղաղասիրական գործունեությունը արտացոլող զանազան վավերագրերում, հուշերում և Բանտի օրագրում բանաստեղծը մնում է թե՛ հայ ժողովրդի և թե՛ մարդկության զինվոր: Իր կյանքի բոլոր դժվարին պահերին, բոլոր անհանգստությունների, հուզումների ու տառապանքների մեջ Թումանյանը միշտ պահեց մի ներքին խաղաղություն, լավի հաղթանակի նկատմամբ հավատ, որովհետև ամեն տեղ վատի կողքին նա տեսնում էր լավը, վատի մեջ էլ փնտրում էր լավը, և սիրում էր այդ լավը.

Ահա ինչու էս աշխարհքում
Խաղաղ է միշտ և իմ հոգին,
Պաշտպանում է նա իր խորքում,
Սիրում է ողջ և ամենքին:

---

42 Р. Андерсон. *История вымерших цивилизаций Востока. М., 1898.*

Մարդու և աշխարհի հանդեպ ունեցած անհուն սիրուց ծնված հարուստ հոգու խաղաղության մասին այս տողերը ևս բանաստեղծը գրել է Բանտի օրագրում, անհյուրընկալ պատերի մեջ՝ Սիրիրն ու աքսորը աչքի առաջ ունենալով:

Հետևաբար վստահ կարելի է ասել, որ «մեծ ու հարուստ» սիրտ ուներ նա, իսկ այդպիսի մարդիկ, հենց Թումանյանի համողմամբ, «կարող են վշտանալ և շատ վիշտ ու ցավ ունենալ, բայց երբեք դժբախտ չեն լինում նրանք»:

ОВ. ТУМАНЯН И "ДАШНАКСКИЙ ПРОЦЕСС" 1912 г.

С. Г. ОВАНЕСЯН

Резюме

Национально-патриотическая деятельность Ов. Туманяна, многие моменты его личной жизни по сей день малоизучены. Разжигавшаяся самодержавным режимом национальная рознь в 1905–1906 гг. в Баку переросла в кровопролитные столкновения между армянским населением и татарами. Совместно с партией дашнаков Туманян организовал самооборону армянского народа, возглавив ополчение, защищавшее население Лори, Казаха и Борчалу. Ценою неимоверных усилий ему удалось остановить кровопролитие, но за миротворческую деятельность он был подвергнут длительным гонениям и неоднократным арестам. Царская жандармерия возбудила против Ов. Туманяна уголовное дело. Вместе с большой группой армянских общественных деятелей он оказался на скамье подсудимых по обвинению в антиправительственной деятельности. Из Метехской тюрьмы поэт был переправлен в Петербург, в Петропавловскую крепость. Суд завершился 20 марта 1912 г. полным оправданием Ов. Туманяна. В статье впервые вводится в научный оборот подробная история судебного процесса, основанная на исследовании 135 томов "Дашнакского дела" объемом в сорок тысяч страниц. В дневнике Туманяна, написанном в тюремных застенках, раскрываются практически неизвестные страницы биографии и общественной деятельности поэта. В тюрьме Туманян продолжал заниматься литературной работой-писал и переводил стихи, изучал научные труды по языкознанию, фольклористике, греческой и восточной мифологии.